	Archipelago Interactive SRL Ընկերությունը գործում է բիզնեսի աջակցման ոլորտում: Ընկերության հիմնական նպատակներն են՝ ➢ Ձեռնարկատերերին աջակցել թիրախային շուկաներ գտնելու հարցում ➢ Կապեր հաստատել Ձեռնարկատերերին և թիրախային ոլորտների հայտնի փորձագետների միջև ➢ Ձեռնարկատերերին ներկայացնել ֆինանսավորման առկա հնարավորությունները ➢ Խթանել ձեռնարկատերերի միջև գործընկերություն և ռազմավարական համագործակցություն խթանել ➢ Աջակցել տեղական ձեռնարկությունների միջազգայնացմանը: Ընկերությունը ցանկանում է համագործակցել Հայաստանում գործող բիզնեսի աջակցման ոլորտում մասնագիտացած կազմակերպությունների հետ, որոնք հետաքրքրված են համագործակցել ձեռներեցության, կրթության և առևտրի միջազգայնացմանն ուղղված Եվրոպական նախագծերի շրջանակներում:
	IQ WATER MEDICAL Բժշկական սարքավորումների ոլորտում գործող ընկերությունն արտադրում է չժանգոտվող պողպատից վիրաբուժական լվացարաններ, չժանգոտվող պողպատից բժշկական կահույք, ջրի ստերիլ զտիչներ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ՝ չժանգոտվող պողպատից բժշկական կահույքի և սարքավորումների համար:
	ICONIC CLUSTER Կլաստերը խթանում է համագործակցությունը, կապ է հաստատում ընկերությունների, գիտահետազոտական, կրթական, նորարարական ինստիտուտների միջև և հնարավորություն է տալիս գիտելիքների ինտենսիվ փոխանակմանը: Կլաստերի նպատակն է՝ բարձրացնել գործընկերների մրցունակությունն ու դինամիկությունը և նպաստել գիտելիքի փոխանակմանը, նոու-հաուի և համագործակցության ձևավորմանը: Կլաստերը փնտրում է համագործակցություն բիզնեսին/ նորարարությանը աջակցող կառույցների հետ:

	[Asociatia GAL Codrii Pascanilor](#) Ասոցիացիան գործում է տեղական կայուն զարգացման աջակցության, խորհրդատվության ոլորտում: Ասոցիացիայի հիմնական նպատակներից է տարածաշրջանի ինքնուրույն տնտեսական և սոցիալական զարգացումը, որն ապահովում է որակյալ, ֆինանսական, մարդկային և ինստիտուցիոնալ գործողությունների միջոցով: Ապահովում է կապը տեղական, տարածքային և պետական կառավարման մարմինների, տնտեսվարողների և քաղաքացիական հասարակության միջև: Ասոցիացիան փնտրում է համագործակցություն տեղական զարգացմանն աջակցող կազմակերպությունների հետ:
	[MAROCO SYSTEMS SRL](#) Ընկերությունն առաջարկում է լավագույն լուծումները տան և բիզնես անվտանգության համակարգերի ոլորտում՝ նախագծից մինչ տեղադրում: Այն մասնագիտացած է խորհրդատվության, տեղադրման և սպասարկման ոլորտներում, ինչպես անվտանգային համակարգերի, այնպես էլ էլեկտրական կայանքների համար: Ընկերությունը փնտրում է վերը նշված ոլորտում մասնագիտացած նորարարական գործընկերներ:
	[PRO EX 2005 SRL](#) Շինարարական ընկերությունը գործում է քաղաքացիական շինարարության, ինչպես նաև շինանյութերի արտադրության ոլորտում: Ընկերությունն ունի որակյալ կադրեր, տեխ սարքավորումներ, մեքենաներ, պահեստ, տրանսպորտային միջոցներ և լոգիստիկա, որն անհրաժեշտ է ոլորտում ցանկացած գործունեություն իրականացնելու համար ինչպես Ռումինիայում, այնպես էլ արտերկրում: Ընկերությունը փնտրում է համագործակցություն վերը նշված ոլորտում, որի միջոցով կփոխանակվեն լավագույն փորձը և ռազմավարությունները:

	Ludor Engineering Ընկերությունը տրամադրում է հետևյալ ինժեներական ծառայությունները՝ արտադրանքի մշակում, մեխանիկական նախագծում և նախատիպավորում: Այն ունի կրթության ոլորտում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման փորձ, ներառյալ՝ արդյունաբերություն 4.0, անօդաչու թռչող սարքեր, 3D տպագրություն և այլն, ինչպես նաև ԵՄ նախագծերին որպես համակարգող և գործընկեր մասնակցելու փորձ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք ցանկանում են մշակել նոր արտադրանք:
	Oaks Events Management Ընկերությունը գործում է միջոցառումների կազմակերպման ոլորտում: Այն նախագծում և կազմակերպում է տարբեր տիպի միջոցառումներ: Մինչ այժմ կազմակերպած միջոցառումների քանակը հասնում է 360-ի: Ընկերությունը փնտրում է իր ծառայություններով հետաքրքրվող գործընկերներ: